

Աստուածածին<sup>3</sup>, եւ զարդարեաց զնա հրաշալի սպասիւք եւ կազմութեամբ<sup>4</sup>:  
90 Նոյնպէս եւ զՍուրբ Կարապետն ի<sup>5</sup> Գլակայ վանսն մեծաշուք փառաւք<sup>6</sup>  
զարդարեաց:

91 Սա դարձոյց զԿուառս<sup>7</sup> ի Կարապետն եւ զՊարտիս<sup>8</sup>: 92 Քանզի<sup>9</sup> իշխան ոմն  
անաւրէն տանն Մամիկոնենից<sup>10</sup> կտրեաց զերկուս<sup>11</sup> աւանսն<sup>12</sup> ի վանացն<sup>13</sup> եւ ետ  
զուսանի ումեմն կնոջ<sup>14</sup>, զոր<sup>15</sup> բարկացեալ հաւրն<sup>16</sup> Կիւրդի, անիծեալ զիշխանն վասն  
կտրելոյ զգեւղսն<sup>17</sup> ի վանացն<sup>18</sup>: 93 Իսկ<sup>19</sup> յետ<sup>20</sup> ամսոյ միոյ<sup>21</sup> յորս<sup>22</sup> ելեալ՝ ընկեց զնա  
երիվարն, եւ<sup>23</sup> եհան զոգին: 94 Բայց որդին, թեպէտ եւ ետ<sup>24</sup> զաւանսն, այլ ոչ էառ ի  
նմանէ հայրն<sup>25</sup> մինչեւ ի գալ այս իշխանիս<sup>26</sup>: 95 Արդ՝ այս իշխանս<sup>27</sup> կշռեաց ԻԲ Ռ  
դահեկան եւ ետ<sup>28</sup> իշխանին Տարաւնոյ<sup>29</sup>, եւ զնեաց զԿուառս եւ զՊարտիս<sup>30</sup> եւ ետ  
զնոսա վանացն վճռաւ<sup>31</sup>, եւ երկու գեւղս<sup>32</sup> յիւր<sup>33</sup> գաւառէն<sup>34</sup> զԱրտամետ<sup>35</sup> եւ զԳահ

- 
- 1 *հմ* վայելուչ եկեղեցի *փիս* եկեղեցի վայելուչ
  - 2 *հմ* անուն *փիս* զանուն Նորա
  - 3 *հմօ* Աստուածածին վասն կնոջն իւրում *փիս* վասն կնոջն ... Աստուածածին (*blsv*)
  - 4 *հմօ* չիք եւ կազմութեամբ
  - 5 *հմ* չիք ի
  - 6 *bl* եւ փառաւք / *հմօ* չիք մեծաշուք փառաւք
  - 7 *հմ* զԿուառսն
  - 8 *s* եւ զՊարտիս ի Կարապետն *փիս* ի Կարապետն եւ զՊարտիս
  - 9 *օ* զի *փիս* բանզի
  - 10 *հմօ* չիք տանն Մամիկոնենից
  - 11 *lv* զերկու
  - 12 *bl* աւանս *փիս* աւանսն (*sv*)
  - 13 *հմ* զերկոսեանն, *օ* զերկոսեանս *փիս* զերկուս աւանսն ի վանացն (*blsv*)
  - 14 *bl* չիք կնոջ
  - 15 *հմօ* մի իսկ *փիս* ումեմն կնոջ, զոր (*blsv*)
  - 16 *b* չիք հաւրն
  - 17 *s* զգիւղսն
  - 18 *հմօ* Կիւրդել (*օ* Կիւրդի) հայր վանացն անեծ զնա *փիս* բարկացեալ ... ի վանացն (*blsv*)
  - 19 *հմօ* եւ *փիս* Իսկ (*blsv*)
  - 20 *h* չիք յետ
  - 21 *հմօ* սակաւ ժամանակի *փիս* ամսոյ միոյ (*blsv*)
  - 22 *h* որս / *sv* ի յորս
  - 23 *հմօ* իշխանն անկեալ յերիվարէն *փիս* ընկեց զնա երիվարն եւ (*blsv*)
  - 24 *հմօ* դարձոյց *փիս* ետ (*blsv*)
  - 25 *հմօ* Նոթա ոչ առին *փիս* այլ ոչ էառ ... հայրն (*blsv*)
  - 26 *հմօ* ցայս իշխան *փիս* ի գալ ... իշխանիս (*blsv*)
  - 27 *հմօ* իշխան
  - 28 *օ* տարաւ ետ
  - 29 *հմօ* Նոյն իշխանին *փիս* իշխանին Տարաւնոյ (*blsv*)
  - 30 *հմօ* զերկոսեան (*հմ* զերկոսին) աւանսն *փիս* զԿուառս եւ զՊարտիս (*blsv*)
  - 31 *bl* վճիռ / *հմօ* Կարապետին վճռով *փիս* զնոսա վանացն վճռաւ (*blsv*)
  - 32 *s* գիւղս / *հմօ* Սա ետ Բ աւանս *փիս* եւ երկու գեւղս (*blsv*)
  - 33 *h* իւր *փիս* յիւր
  - 34 *հմօ* իշխանութենէն սուրբ Կարապետին *փիս* գաւառէն (*blsv*)
  - 35 *օ* զԱրտամետ